

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 21
վիճակագրության պետական խորհրդի նիստի

23.12.2009թ.

Ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Ա.Շաբոյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ջ. Միրզոյան (նախագահի գլխավոր խորհրդական), Գ.Մուրադյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Ա.Դաշյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ), Ն.Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Գ. Մարտիրոսյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ), Գ. Նշանյան (մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ), Ա.Առուշանյան (տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ), Ա. Մարտիրոսյան (տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ):

Օրակարգի նախագծում՝ հինգ հարց.

1. «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ն.Մուշեղյան/

2. «Արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների արտադրանքի գների հաշվառման մասին» Ձև թիվ 1-Գ-ին (արտադրանք) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և «ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 1999թ. ապրիլի 5-ի թիվ 61 հրամանը ուժը կորցրած ճանաչելու ինչպես նաև «Արդյունաբերողների գների ինդեքսի հաշվարկման կարգը հաստատելու մասին ՀՀ ՎՊԽ թիվ 05-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/

3. «Ձև թիվ 10-Ուղեկցող թերթ» ձևաթուղթը, «Ձև թիվ 12-քաղաքային Հուշատետր քաղաքներում հրահանգիչ-հսկիչի» հուշատետրը, «Ձև թիվ 12-գյուղական Հուշատետր գյուղական վայրերում հրահանգիչ-հսկիչի» հուշատետրը, «Ձև թիվ 7-քաղաքային/ գյուղական Ամփոփ տեղեկագիր Հրահանգչական տեղամասի» ամփոփ տեղեկագիրը, «Ձև թիվ 14-Հրահանգիչ-հսկիչի հաշվետվություն» ձևաթուղթը, «Ձև թիվ 13-Հուշատետր Մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի» հուշատետրը, «Ձև թիվ 8-Ամփոփ տեղեկագիր Մարդահամարի տեղամասի» ամփոփ տեղեկագիրը, «Ձև թիվ 8-ի հավելված Մարդահամարի հարցաթերթում գրանցվածների թվաքանակն ըստ առանձին բնակավայրերի» ձևաթուղթը, «Ձև թիվ 15 Մարդահամարի տեղամասի վարիչի հաշվետվություն» ձևաթուղթը, «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալություններում մարդահամարի գործերը համակարգող տարածքային կոորդինատորի պարտավորությունները», «Ձև թիվ 9 Ամփոփ տեղեկագիր Մարզի (տարածքի)» ամփոփ տեղեկագիրը, «Ձև թիվ 9-ի հավելված 1. Վերահսկիչ շրջագայության ամփոփագիր» ձևաթուղթը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Գ. Նշանյան/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Սլովենիայի Լյուբլյանա քաղաքում 16.11-20.11.2009թ. տեղի ունեցած «Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) և Ֆինանսների գերազանցության կենտրոնի

(Սլովենիա) կողմից կազմակերպված «Գրամական փոխանցումների վիճակագրություն» թեմայով սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Շաբոյան/

4.2. Հաղորդում Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 30.11-02.12.2009թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ոչ ֆորմալ հատվածի և ոչ ֆորմալ զբաղվածության գնահատում» թեմայով սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Գևորգյան, Ա.Շաբոյան/

4.3. Հաղորդում Ղազախստանի Հանրապետության Աստանա քաղաքում 23-25.11.2009թ.տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Սիջին Ասիայի և այլ ԱՊՀ երկրների համար «Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) ցուցանիշների և վիճակագրական տեղեկատվության տարածումը» թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան, Ա. Մարտիրոսյան/

4.4. Հաղորդում Հունաստանի Աթենք քաղաքում 24-25.11.2009թ. տեղի ունեցած «ՀՀ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքների վերլուծությանը վերաբերող աշխատանքային քննարկմանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Առուշանյան/

4.5. Հաղորդում Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 09-11.12.2009թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ասիայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում տնտեսական վիճակագրության կատարելագործման համար տարածաշրջանային ծրագրի մշակում» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Առուշանյան/

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը»՝ համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների արտադրանքի գների հաշվառման մասին» Ձև թիվ 1-Գ-ին (արտադրանք) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և «ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարի 1999թ. ապրիլի 5-ի թիվ 61 հրամանը ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «Արդյունաբերողների գների ինդեքսի հաշվարկման կարգը հաստատելու մասին ՀՀ ՎՊԽ թիվ 05-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/

Որոշեցին՝

1. Հաստատել «Արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների արտադրանքի գների հաշվառման մասին» Ձև թիվ 1-ԳԻՆ (արտադրանք) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարի 1999 թվականի ապրիլի 5-ի «Պետական վիճակագրական հաշվետվություններ և դրանց լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 61 հրամանը:

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի փետրվարի 13-ի «Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ, անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Ձև թիվ 10-Ուղեկցող թերթ» ձևաթուղթը, «Ձև թիվ 12-քաղաքային Հուշատետր քաղաքներում հրահանգիչ-հսկիչի» հուշատետրը, «Ձև թիվ 12-գյուղական Հուշատետր գյուղական վայրերում հրահանգիչ-հսկիչի» հուշատետրը, «Ձև թիվ 7-քաղաքային/ գյուղական Ամփոփ տեղեկագիր Հրահանգչական տեղամասի» ամփոփ տեղեկագիրը, «Ձև թիվ 14-Հրահանգիչ-հսկիչի հաշվետվություն» ձևաթուղթը, «Ձև թիվ 13-Հուշատետր Մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի» հուշատետրը, «Ձև թիվ 8-Ամփոփ տեղեկագիր Մարդահամարի տեղամասի» ամփոփ տեղեկագիրը, «Ձև թիվ 8-ի հավելված Մարդահամարի հարցաթերթում գրանցվածների թվաքանակն ըստ առանձին բնակավայրերի» ձևաթուղթը, «Ձև թիվ 15 Մարդահամարի տեղամասի վարիչի հաշվետվություն» ձևաթուղթը, «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալություններում մարդահամարի գործերը համակարգող տարածքային կոորդինատորի պարտավորությունները», «Ձև թիվ 9 Ամփոփ տեղեկագիր Մարզի (տարածքի)» ամփոփ տեղեկագիրը, «Ձև թիվ 9-ի հավելված 1. Վերահսկիչ շրջագայության ամփոփագիր» ձևաթուղթը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Նշանյան/

Որոշեցին՝

հաստատել Հայաստանի Հանրապետությունում 2010 թվականին անցկացվելիք փորձնական մարդահամարի ուղեկցող ձևաթղթերը, հուշատետրերը և ամփոփ տեղեկագիրները:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Սլովենիայի Լյուբլյանա քաղաքում 16.11-20.11.2009թ. տեղի ունեցած «Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) և Ֆինանսների գերազանցության կենտրոնի (Սլովենիա) կողմից կազմակերպված «Գրամական փոխանցումների վիճակագրություն» թեմայով սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Շաբոյան/

4.2. Հաղորդում Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 30.11-02.12.2009թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ոչ ֆորմալ հատվածի և ոչ ֆորմալ զբաղվածության գնահատում» թեմայով սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Ա.Շաբոյան/

4.3. Հաղորդում Ղազախստանի Հանրապետության Աստանա քաղաքում 23-25.11.2009թ.տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Միջին Ասիայի և այլ ԱՊՀ երկրների

համար «Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) ցուցանիշների և վիճակագրական տեղեկատվության տարածումը» թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ն.Մուշեղյան, Ա. Մարտիրոսյան/

4.4. Հաղորդում Հունաստանի Աթենք քաղաքում 24-25.11.2009թ. տեղի ունեցած «ՀՀ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքների վերլուծությանը վերաբերող աշխատանքային քննարկմանը» մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ա.Առուշանյան/

4.5. Հաղորդում Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 09-11.12.2009թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ասիայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում տնտեսական վիճակագրության կատարելագործման համար տարածաշրջանային ծրագրի մշակում» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ա.Առուշանյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Այլ հարցեր

Լսեցին՝

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ինտերնետային կայք-էջում, տեղադրելու մասին հարցը:

Որոշեցին՝

հանձնարարել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին այսուհետ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները տեղադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ինտերնետային կայք-էջում, բացառելով դրանց ուղղակի և անուղղակի բացահայտման հնարավորությունը:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ